965 Երբ հասկացա Քո սերը, որ հանձն առար իմ մեղքերը

1. Երբ հասկացա Քո սերը, որ հանձն առար իմ մեղքերը
Ու Գողգոթա Դու բարձրացար,
Իմ փոխարեն ծեծվեցիր,
Այդքան սիրով Դու խաչվեցիր,
Երբ ես դեռ Քեզ չէի ճանաչում:
Հիմա, Հիսո՛ւս, ուզում եմ ես
Ամբողջ ձայնով կանչել ես Քեզ:

Տե՛ր, Քեզ եմ նվիրում կյանքը իմ,
Սիրտս ու հոգիս Քեզ ընծայում,
Ձղջում եմ, խնդրում Քեզ՝ ինձ ների՛ր,
Չեմ ուզում մնալ մեղքին գերի:
Տե՛ր, ես էլ կորած գառներից մեկն եմ
Եվ անչափ Քո կարիքը ունեմ:

2. Իմ կողքով անցար, Հիսո՛ւս,
Ու Քո խոսքով տվեցիր լույս,
Ու իմ հոգին, Տե՛ր, պարուրվեց,
Ինձ էլ, Տե՛ր, խոսքդ հասավ:
Խավար սիրտս լույսի դարձավ,
Անխոս հոգիս, Տե՛ր, արտասվեց,
Ու, Տե՛ր Հիսուս, ուզում եմ ես
Հոգուս ձայնով գոչել դեպ Քեզ: